



Մնացորդային ներկի կառավարման ծրագիր

Ամեն տարի Միացյալ Նահանգներում վաճառվում է շինարարական նպատակներով օգտագործվող մոտ 850 միլիոն գալոն ներկ: Գիտե՞ի՞ք, որ այդ ներկի մոտ 10 տոկոսը չի օգտագործվում և ենթակա է վերամշակման:

Ներկօգտագործման արդյունավետ կառավարման օրենքներով պահանջվում է, որ ներկերի արտադրության ոլորտը մշակի ինքնաֆինանսավորվող և շրջակա միջավայրի պահպանության պատասխանատվությամբ մի ծրագիր, որով կիրականացվի շինարարական նպատակներով օգտագործվող ներկի թափոնների (մնացորդների) կառավարում: Ներկ արտադրողները, որպեսզի իրականացնեն ներկօգտագործման արդյունավետ կառավարման ծրագրեր կիրառելի օրենքներ ունեցող Նահանգներում:

Ծրագիրը նախատեսում է ուսուցում ձիշտ քանակով ներկ գնելու վերաբերյալ, խորհուրդներ մնացորդային ներկի օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև նախատեսում է հանձնման կետերի համար հարմար վայրերի հատկացում նահանգի ողջ տարածքում:

PaintCare-ում ընդգրկված ապրանքներ

Այս ապրանքները կարող եք գնել՝ վճարելով դրանց դիմաց, և դրանք ընդունվում են հանձնման կետերում առանց լրացուցիչ ծախսի:

- Ներքին և արտաքին ճարտարապետական ներկեր՝ լատեքսային, ալկիլային, ջրային հիմքով, ալկիդային, յուղային հիմքով, էմալ (ներառյալ տեքստուրայով ծածկող միջոցները)
- Տախտակների ներկեր, հատակի ներկեր (ներառյալ ձկուն ձևափոխության ենթարկվող ներկերը)
- Պրայմերներ, հերմետիկներ, նախաներկեր
- Պիգմենտներ
- Շելաքներ, պոլիուրաններ, լաքեր, ուրեթաններ (միաբաղադրիչ)
- Ջրամեկուսիչ հերմետիկներ և ռեպելենտներ բետոնի/քարե շարվածքի/փայտի համար (որոնք հուղորոնային կամ բիտումային հիմքով չեն)
- Մետաղի պաշտպանիչ նյութեր, հակակոռոզիոն ծածկանյութեր
- Դաշտերի ու գազոնների ներկեր

Արտահոսք ունեցող, առանց պիտակի և դատարկ տարաները հանձնման կետերում չեն ընդունվում:

PaintCare-ում չընդգրկված ապրանքներ

- Ներկերի լուծիչներ, լաքերի լուծիչներ, այլ լուծիչներ
- Սերոգոլային ծածկանյութեր
- Ավտոմոբիլների և նավերի ներկեր
- Գեղանկարչական ներկեր
- Ծեփանյութեր, էպօքսիդային մածվածքներ, սոսինձներ, սոսնձանյութեր
- Ներկերի հավելանյութեր, գունանյութեր, խտացնող բաղադրությունների ներկանյութեր, ռետիններ
- Փայտի պաշտպանիչ ծածկանյութեր (թունաքիմիկատներ պարունակող)
- Տանիքի կարկատման և նորոգման նյութեր
- Ասֆալտի, հուղորոնի և բիտումի հիմքով արտադրանք
- Երկրորդային նյութային ծածկանյութեր
- Փայտե տախտակներ մաքրող նյութեր
- Ծանապարհային և երթևեկության նշանների ներկեր
- Արդյունաբերական տարածքների պաշտպանիչ ներկանյութեր և լաքածածկող նյութեր
- Օրիգինալ սարքավորումների արտադրողի (գործարանում կիրառվող) ներկեր և հարդարման նյութեր

PaintCare-ին չպատկանող ապրանքների հանձնման և դրանց պատշաճ ձևով հեռացման մասին տեղեկատվության համար խնդրում ենք կապվել ձեր աղբահանողի, շրջակա միջավայրի հիգիենայի հարցերով զբաղվող գործակալության, կենցաղային վնասակար աղբի կառավարման ծրագրի գրասենյակի կամ հասարակական շինությունների կառավարման ղեկարարամետի հետ:



Որտե՞ղ եմ հանձնում մագորդային ներկը

PaintCare-ի միջոցով հարմար է հանձնել ներկի մագորդները: Մենք բացել ենք ներկերի հանձնման կետեր այն նահանգներում, որոնք ունեն ներկօգտագործման արդյունավետ կառավարման օրենքներ: Ձեզ ամենամոտ հանձնման կետը գտնելու համար կատարեք PaintCare-ի հանձնման կետի տեղորոշում www.paintcare.org կայքում կամ զանգահարեք մեր թեժ գծին՝ (855) PAINT09 հեռախոսահամարով:

Ի՞նչպես հանձնել

PaintCare-ի կետերն ընդունում են բոլոր ապրանքանիշների շինարարական մագորդային ներկեր, պիգմենտներ ու լաքեր, անկախ նրանից՝ դրանք վերջերս են օգտագործվել, թե մի քանի տարվա են: Տարաների պարունակությունը պետք է լինի հինգ գալոնի չափով կամ ավելի քիչ, իսկ ներկերի որոշ տեսակներ չեն ընդունվում: PaintCare-ի կողմից ընդունվող ապրանքների ցանկը տե՛ս հակառակ կողմում:

PaintCare-ի բոլոր հանձնման կետերը յուրաքանչյուր այցելության ժամանակ ընդունում են մինչև հինգ գալոն ներկ: Որոշ կետերում ընդունում են ավելի շատ: Խնդրում ենք նախապես զանգահարել հանձնման կետեր, որպեսզի հաստատեք աշխատանքային ժամերը և հավաստիանք, որ նրանք կարող են ընդունել ներկի այն քանակը, որը ցանկանում եք հանձնել:

Համոզվեք, որ ներկի բոլոր տարաներն ունեն կափարիչներ և արտադրողի պիտակներ, և տեղավորեք դրանք ձեր ավտոմեքենայում այնպես, որ ընթացքի համար ապահով լինեն: Դրանք տարե՛ք հանձնման կետեր նրանց ամենօրյա աշխատանքային ժամերին: Մենք կվերցնենք դրանք այնտեղից:



Ի՞նչ է լինում ներկի հետ

PaintCare ծրագրի շրջանակում տարվում է աշխատանք, որպեսզի ձեր հանձնած մագորդային ներկն օգտագործվի տարբեր շահավետ եղանակներով. այն խառնվում է հանձնված մյուս ներկերի հետ, օգտագործվում է որպես վառելիք, դրանից պատրաստում են այլ ապրանքներ կամ այն պատշաճ կերպով հեռացվում է, եթե հնարավոր չէ այն այլ նպատակահարմար ձևով օգտագործել:

Ո՞վ կարող է օգտվել ծրագրից

Տնային տնտեսությունները կարող են հանձնել լատեքսային կամ յուղային հիմքով ներկ այն քանակով, որքան պատրաստ է ընդունել հանձնման կետը:

Բիզնեսները կարող են հանձնել լատեքսային հիմքով ներկ այն քանակով, որքան պատրաստ է ընդունել հանձնման կետը, սակայն յուղային հիմքով ներկի համար կարող են սահմանափակումներ գործել: Մանրամասների համար այցելեք

Ընդունո՞ւմ եք մեծ քանակով ներկ

Եթե հանձնման համար ունեք առնվազն 100 գալոն ներկ ձեր ընկերությունում կամ տանը, դիմե՛ք մեծ ծավալների հավաքագրումներ կատարող մեր անվճար ծառայությանը: Մանրամասներին ծանոթանալու կամ հավաքագրում պատվիրելու համար այցելեք www.paintcare.org:



PaintCare-ի վճարները

PaintCare-ի ֆինանսավորումն իրականացվում է ներկարտադրողների կողմից նահանգում վաճառած ներկի յուրաքանչյուր տարայի համար կատարած վճարումների հաշվին: Արտադրողները վճարները փոխանցում են մանրածախ վաճառողներին, որոնք այդ վճարն ավելացնում են ներկի գնին: Մանրածախ վաճառողներին խրախուսում են ցույց տալ այդ վճարը հաճախորդին տրվող կտրոնի վրա: Վճարը 30 ցեստից մինչև 2.45 դոլար է՝ կախված տարայի չափից և նահանգից:

\$0.30 – \$0.65	Փոքր տարաներ (օր.՝ պիտներ և քվարտեր)
\$0.65 – \$1.35	Միջին չափի տարաներ (օր.՝ 1 գալոն)
\$1.50 – \$2.45	Մեծ չափսեր՝ մինչև 5 գալոն

Դեպոզիտ չէ

Վճարը չի համարվում դեպոզիտ, այն կազմում է վաճառքի գնի մասը: Վճարն օգտագործվում է ծրագրի ընթացիկ ծախսերի, այդ թվում՝ ներկերի ընդունման, հանրային ուսուցման ծախսերի, անձնակազմի վարձատրության և այլ ծախսերի համար:

Կապ մեզ հետ

Սկզբից իմանալու կամ հանձնման կետ գտնելու համար խնդրում ենք այցելել www.paintcare.org կամ զանգահարել (855) PAINT09 հեռախոսահամարով: